ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄ-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանու 2022 թվականի սեպտեմբերի 2-ի արտահերթ նիստի օրակարգը.

1) Սպիտակ համայնքի ավագանու 2022 թվականի փետրվարի 2-ի թիվ 4-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

/Զեկուցող՝ Վ. Ապրեսյան/

2)Սպիտակ համայնքի սեփականության գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունները հաստատելու մասին

/Զեկուցող՝ Վ. Ապրեսյան/

3)Սպիտակ համայնքի 2022-2027 թվականների հնգամյա զարգացման ծրագիրը հաստատելու մասին

/Զեկուցող՝ Ա. Ֆրանգյան/

4)Սպիտակ համայնքի 2022 թվականի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին

/Զեկուցող՝ Ա. Ֆրանգյան/

5)«Սպիտակ համայնքի բնակարանների և ենթակառուցվածքների սպասարկման գրասենյակ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը գույք ամրացնելու մասին

/Զեկուցող՝ Ա. Ֆրանգյան/

6)«Սպիտակ համայնքի 2023 թվականի բնական միջավայրի պահպանման և բնակչության առողջության վերականգնման ծրագիր»-ը հաստատելու մասին

/Զեկուցող՝ Է. Խաչատրյան/

7)Սպորտի և մշակույթի բնագավառում ձեռքբերումներ ունեցած, Սպիտակ համայնքում հաշվառված և փաստացի բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին խրախուսելուն համաձայնություն տալու մասին

/Զեկուցող՝ Զ. Համբարյան/

8)Սպիտակ համայնքի ավագանու 2022 թվականի հուլիսի 14-ի թիվ 73-Ա որոշման մեջ լրացումներ կատարելու մասին

/Զեկուցող՝ Ա. Ֆրանգյան/

9)Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերից աճուրդով օտարելուն համաձայնություն տալու և մեկնարկային գին սահմանելու մասին

/Զեկուցող՝ Գ. Չոբանյան/

10)Սպիտակ համայնքի վարչական տարածքում գտնվող, Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասերից մրցույթով վարձակալությամբ տրամադրելուն համաձայնություն տալու և մեկնարկային վարձավճար սահմանելու մասին

/Զեկուցող՝ Գ. Չոբանյան/

11)Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող 06-046-0220-0012 կադաստրային ծածկագրով հողամասն աճուրդով օտարելուն համաձայնություն տալու և մեկնարկային գին սահմանելու մասին

/Զեկուցող՝ Գ. Չոբանյան/

12)Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերից աճուրդով օտարելուն համաձայնություն տալու և մեկնարկային գին սահմանելու մասին

/Զեկուցող՝ Գ. Չոբանյան/

13)Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերից աճուրդով օտարելուն համաձայնություն տալու և մեկնարկային գին սահմանելու մասին

/Զեկուցող՝ Գ. Չոբանյան/

14)Սպիտակ համայնքի ավագանու 2022 թվականի մայիսի 12-ի թիվ 50-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

/Զեկուցող՝ Գ. Չոբանյան/